

թերը, ծանօթ եւ անծանօթ, յուսարով թէ անոնք պիտի նպաստեն ժէ. դարու առաջին քաւորդի Հայ Եկեղեցւոյ անցքերը աւելի լուսով լուսաւորելու :

Աւետիս կաթողիկոս պատմական բեմին վրայ առաջին անգամ երեւան կու գայ 1601ին ինքնագիր յիշատակարանով մը : Այս թուին անիկա Կ. Պոլիս կը գտնուէր. հոս Ս. Սարգիս Եկեղեցւոյ հովանւոյն տակ կ'օրինակէ Ներսէս Շնորհալոյ Ընդհանրականը : Կը ներկայացնեմ այս տեղ Ձեռագրիս յիշատակարանը³, յապաւամբ անկարեւոր տղերու .

«Կատարունն է Ընթանուրակիս (Ընդհանրականիս) :

Գրեցաւ ի թվականիս Հայոց ՌԾ . ի քաղաքն Կոստանդնուպաւլիս, ընդ հովանեաւ սուրբ Սարգըսին . ի քահանաութիւն սուրբ Սարգիսի տէր Նիկողոսոսին, տէր Ալէքսանին, տէր Սարգիսին որ է նորընծայ . բազում աշխատանք ունին վերա գրոցս : Արդ... յիշեցէք... Աւետիս կաթողիկոս էջմիածնեցի, որ անուամբս եմ եւ ոչ գործովս . որ բազում փափաքանաւք եւ աշխատութեամբ գրեցի գիրքս, խամայգիր եւ նաւար : Ով ոք յիշէ զմեզ, յիշեալ լիցի ինքն ի Քրիստոսէ . ամէն :

(ԲՈՂՈՐԳԻՐ) Արդ գրեցաւ սայ ի հալաւ արդեանց իմոց եւ ի արդարեան վաստակոց յիշատակ ինձ Աւետիս կաթողիկոսին եւ ծնաւ

³ Ձեռ. էջմ., 503, թղ. 171 ա :